

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY



FOREIGN LANGUAGES FOR SPECIAL PURPOSES

№ 4 (13)

YEREVAN STATE UNIVERSITY PRESS
YEREVAN 2016

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԸ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

№ 4 (13)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2016

**Recommended by the Scientific Council of the Department
of Romance and Germanic Philology, Yerevan State University,
Republic of Armenia**

- Editor-in-Chief:** **Margarita Apresyan**
Head of ESP Chair N 1, PhD in Linguistics, professor, YSU, RA
- Honourable members of the editorial board:** **Dora Sakayan**
Doctor of Philology, professor, McGill University, Canada
- Svetlana Ter-Minasova**
Doctor of Philology, professor of Moscow State University,
Dean of the Faculty of Foreign Languages,
- Hans Sauer**
Doctor of Philology, Institute of English Philology, Munich
University, Germany
- Charles Hall**
PhD, associate professor of Applied Linguistics, University of
Memphis, USA
- Editorial board:** **Samvel Abrahamyan**
Dean of the Department of Romance and Germanic Philology,
PhD in History, associate professor, YSU, RA
- Jura Gabrielyan**
Doctor of Philology, professor
Head of German Philology Chair, YSU, RA
- Karo Karapetyan**
Head of Translation Chair,
PhD in Pedagogics, professor, YSU, RA
- Albert Makaryan**
Doctor of Philology, professor, YSU, RA
- Yelena Mkhitarian**
Head of German languages Chair, PhD, professor, ASPU, RA,
- Hasmik Bagdasaryan**
Head of Romance Philology Chair, PhD, associate professor

Foreign Languages for Special Purposes, Yerevan, Yerevan State University Press, 2016, p. 176.

FLSP international journal, published once a year, is a collection of scientific articles presented by FLSP practitioners inside and out Armenia targeting at professional experience exchange and concurrent development of FLSP methodologies.

Letters and articles for publishing should be sent to the editor-in-chief

E-mail: english@ysu.am, margaret.apresyan@mail.ru

© Apresyan, M. and others, 2016

© YSU press, 2016

**Հրատարակության և երաշխավորել
ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի
գիտական խորհուրդը**

Գլխավոր խմբագիր՝

Մարգարիտա Ապրեսյան

ԵՊՀ անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի վարիչ, բան.
գիտ. թեկն., պրոֆեսոր

**Խմբագրական
խորհրդի**

Դորա Մաքսյան

բան. գիտ. դոկտ., պրոֆեսոր

պատվավոր անդամներ՝

Մթզիլ համալսարան, Մոնրեալ, Կանադա

Սվետլանա Տեր-Մինասովա

Բան. գիտ. դոկտ.,

Մոսկվայի պետական համալսարանի պրոֆեսոր,

Օտար լեզուների ֆակուլտետի դեկան,

Հանս Մաուեր

Բան. գիտ. դոկտ., պրոֆեսոր

Անգլիական բանասիրության ինստիտուտ, Մյունխենի
համալսարան

Չարլզ Հոուլ

բ.գ.թ., կրտսեր պրոֆեսոր, Մեմֆիսի համալսարան, ԱՄՆ

Մամվել Աբրահամյան

ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի
դեկան, պատմ. գիտ. թեկն., դոցենտ

Խմբագրակազմ՝

Յուրա Գաբրիելյան

ԵՊՀ գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ,

բ.գ.դ., պրոֆեսոր

Կարո Կարապետյան

Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի
վարիչ, մանկ. գիտ. թեկն., պրոֆեսոր

Ալբերտ Սակարյան

բ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ

Ելենա Միխայրյան

ՀՊՄՀ գերմանական լեզուների ամբիոնի վարիչ,

բան. գիտ. թեկն., պրոֆեսոր

Համիկ Բաղդասարյան

Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ

Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար, Եր.: ԵՊՀ հրատ., 2016, 176 էջ:

Գիտական հոդվածների միջազգային ամսագիրը նպատակ ունի հավաքելու և ներկայացնելու Հայաստանի և Հայաստանից դուրս «Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար» (FLSP) ոլորտի մասնագետների մշակած ժամանակակից մեթոդները փորձի փոխանակման և դրանց հետագա զարգացման նպատակով:

© Ապրեսյան Մ. և ուրիշ., 2016

© ԵՊՀ հրատ., 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ CONTENTS

Avagyan N., Bagiryan D., Melkonyan R. THE ROLE OF EDUCATIONAL APPS IN LANGUAGE TEACHING AND LEARNING PROCESSES	8
Avetikian M. TEACHING FOREIGN LANGUAGE FOR SPECIFIC PURPOSES: TEACHER DEVELOPMENT	18
Абрамян С. ЛИНГВОКУЛЬТУРНЫЕ ОСОБЕННОСТИ СОВРЕМЕННОГО АНГЛОЯЗЫЧНОГО ПОЛИТИЧЕСКОГО ДИСКУРСА	30
Амирян Н. ОСОБЕННОСТИ ФУНКЦИОНИРОВАНИЯ ПОЛИТИЧЕСКИХ ЭВФЕМИЗМОВ В СМИ ПРИ ОСВЕЩЕНИИ ЧЕТЫРЕХДНЕВНОЙ ВОЙНЫ В НАГОРНОМ КАРАБАХЕ	41
Сидоренко Т., Рыбушкина С., Апресян М., Багирян Д. ИНТЕГРАЦИЯ ПРЕДМЕТНО-ЯЗЫКОВОГО ОБУЧЕНИЯ В КОНТЕКСТЕ СТРАТЕГИЙ ИНТЕРНАЦИОНАЛИЗАЦИИ ВУЗОВ ПОСТСОВЕТСКОГО ПРОСТРАНСТВА (НА ПРИМЕРЕ РОССИИ И АРМЕНИИ)	50
Тер-Саргсян Л. ПЕРЕВОД КАК КЛЮЧ К ПОНИМАНИЮ НАУЧНОГО ЭКОНОМИЧЕСКОГО ТЕКСТА	67
ԱԹՈՅԱՆ Լ. ԹԵՍՄԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ ՀՀ-ՈՒՄ	78

Ապրեսյան Մ., Գյուլգառյան Դ., Տեր-Սարգսյան Լ.
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ 89

Գրիգորյան Շ.
ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ
ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ 101

Մարտիրոսյան Մ.
«ՀԱՄՈՂՈՒՄ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 111

Մինասյան Է.
ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ԻՍՊԱՆԱԿԱՆ ԹՎԱՅԻՆ
ՄԱՄՈՒԼՈՒՄ 120

Սարգսյան Լ.
ՏԵՔՍՏԻ ԽՏԱՑՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ
ԳԻՏԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ 134

Ոսկանյան Ա.
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ESP ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ 149

Սարգսյան Լ.
ԼԵԶՎԱԿԱՆ ՏՆՏԵՍՄԱՆ ՎԵՐԱՍՈՒՅԹԱՅԻՆ
ԴԻՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ 162

Ապրեսյան Մ.

(Երևանի պետական համալսարան)

Գյուլգարյան Դ.

(Վանաձորի պետական համալսարան)

Տեր-Սարգսյան Լ.

(Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան)

ՕՏԱՐ ԼԵՂՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

ABSTRACT

EDUCATIONAL STANDARDS IN TEACHING A FOREIGN LANGUAGE IN ARMENIA

Qualitative changes existent in foreign language teaching methodology in Armenian secondary schools seem not quite sufficient. To keep pace with the 21st century demands, we think it necessary to introduce fundamental reforms in foreign language methodology as well as to change the attitude towards language learning on the whole, breaking down the stereotypes working in the past .

The article presents new trends and approaches to foreign language teaching at large that would promote the development of educational process in Armenia.

Key words: *Qualitative changes, foreign language teaching methodology, fundamental reforms, educational process.*

РЕЗЮМЕ

ОБРАЗОВАТЕЛЬНЫЕ СТАНДАРТЫ В ОБУЧЕНИИ ИНОСТРАННЫМ ЯЗЫКАМ В АРМЕНИИ

Качественные изменения в методике преподавания иностранных языков в общеобразовательной школе в Армении кажутся не совсем достаточными.

Необходимы кардинальные изменения и реформы в деле преподавания иностранных языков в Армении с целью разрушения существующих стереотипов.

Настоящая статья указывает на конкретные шаги и подходы к обучению иностранным языкам, способствующие улучшению образовательного процесса в Армении.

Ключевые слова: Качественные изменения, методика преподавания иностранных языков, общеобразовательная школа, образовательный процесс.

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի դպրոցներում օտար լեզուների դասավանդման որակային տեղաշարժերը դեռևս բավարար չեն: 21-րդ դարի պահանջները բավարարելու համար անհրաժեշտ է օտար լեզուների դասավանդման նկատմամբ վերաբերմունքի արմատական փոփոխություն, որը ենթադրել է տալիս անցյալ կարծրատիպերի վերացում: Հրատապ է դարձել միջմշակութային նորորակ հաղորդակցության պայմաններում նոր ժամանակների առարկայական բովանդակավորմանն ու մեթոդաբանությանը հարիր ծրագրերի ու դասագրքերի նորովի ստեղծման անհրաժեշտությունը: Առաջարկվում են հստակ ձեռնարկումներ, որոնք հնարավորություն կստեղծեն օտար լեզուների միջոցով խթանելու երկրի կրթության զարգացումը:

Բանալի բառեր՝ կրթական չափորոշիչ, հայեցակարգային հիմքեր, գործունեությունական մոտեցում, հանրամշակութային հաղորդակցություն, հաղորդակցական-ճանաչողական մոտեցում, միջառարկայական աղերսներ, վերառարկայական գիտակցություն:

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Թեև խորհրդային տարիների կրթական համակարգը ժամանակին մրցունակներից է համարվել, սակայն օտար լեզուների դասավանդման հարցում նկատելի հաջողություն չի գրանցվել: Սա պայմանավորված էր ժամանակի գաղափարական պարտադրանքով, «երկաթե վարագույրի» առկայությամբ՝ խորհրդային քաղաքացիներին բուրժուական «վարակից» ետ պահելու կոմունիստական մտահոգությամբ: Այդ տարիներին աշակերտների մեջ ամրացած էր օտար լեզուներին «մատների արան-

քով» նայելու կարծրատիպը, որին նպաստում էին դասագրքերի և մեթոդների միապաղաղությունը, ուսուցման ոչ գործուն եղանակները, հաճախ ուսուցիչների ոչ բավարար պատրաստվածությունը:

Պետք է նշել, որ անկախացումից հետո Հայաստանի դպրոցներում օտար լեզուների դասավանդման որակային տեղաշարժերը դեռևս բավարար չեն: 21-րդ դարը նոր մարտահրավերներ է նետել ազգերին ու պետություններին, որոնց մեջ մեծ կարևորություն է տրվում օտար լեզուների պատենշի հաղթահարմանը: Նոր ժամանակների պահանջները բավարարելու համար անհրաժեշտ է օտար լեզուների դասավանդման նկատմամբ վերաբերմունքի արմատական փոփոխություն, որը ենթադրել է տալիս անցյալ կարծրատիպերի վերացում:

ԱՆԵԼԻՔՆԵՐԸ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹՍԱԳԾԵՐՈՎ

Ահա վերոհիշյալ թերությունները շտկելու, ինչպես նաև կրթական ընդհանուր գործընթացը բարելավելու համար հարկ է վերանայել ՀՀ-ում գործող օտար լեզուների դասավանդման հայեցակարգային հիմունքները և պետական չափորոշիչները: Վերանայումը պետք է սկսել մասնագետներից ու նրանց մասնագիտորեն պատրաստելու եղանակներից: Պետական միջոցներով հնարավորություն պետք է տրվի ուսուցիչների վերապատրաստման գործընթացն իրականացնելու արտերկրում՝ տվյալ լեզվով հաղորդակցվող միջավայրում: Ուսուցիչների վերապատրաստումը ենթադրում է նաև տևական և չընդհատվող ինքնակատարելագործում, դասավանդման մեթոդների միապաղաղության հաղթահարում, նոր մեթոդների համալրում: Այս ամենն էլ հուշել է տալիս միջմշակութային նորորակ հաղորդակցության պայմաններում նոր ժամանակների առարկայական բովանդակավորմանն ու մեթոդաբանությանը հարիր ծրագրերի ու դասագրքերի նորովի ստեղծման անհրաժեշտություն: Ի վերջո, օտար լեզուներով նախատեսված իրազեկային պաշարը նոր մոտեցումներով հասցեատիրոջը՝ աշակերտին, ուսանողին և առհասարակ օտար լեզու սովորել ցանկացողին լիակատար մատուցելու նպատակով, բացի բանասիրական հակում ունեցողների

համար նախատեսված մասնագիտական հոսքերից, հարկավոր է ավագ դպրոցում (անկախ մասնագիտացվող հոսքից), բուհում կամ որևէ կենտրոնում ապահովել այդ լեզուների խորացված ուսուցում, մասնավանդ որ մեր օրերում պատանիներն իրենք են ընդառաջ գնում դրանց յուրացմանը: Այս ամենի համար անհրաժեշտ է նաև նախկինում ընդունված չափորոշիչների վերանայում, որ կարող է նշանակել նոր չափորոշիչների հաստատում:

Ընդհանուր կրթության պետական չափորոշիչը այդ կրթության հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը որոշող, աշակերտների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, ուսումնական հաստատությունների շրջանավարտների պատրաստականության մակարդակը սահմանող, ինչպես նաև ուսումնական գործընթացի ապահովմանը միտված պահանջների կանոնարկումն է:

Օտար լեզուն կրթական ոլորտի «Բանասիրություն» առարկայափնջի բաղադրիչներից է:

Պետական չափորոշիչը պետք է նախատեսի օտար լեզուների ուսուցման չորս բաղադրիչ՝ 1) ուսուցում տարրական դպրոցում, 2) ուսուցում հիմնական դպրոցում, 3) ուսուցում ավագ դպրոցի ընդհանուր կամ ոչ մասնագիտացվող հոսքերում, 4) ուսուցում ավագ դպրոցի մասնագիտացվող հոսքում:

Հարկ է, որ օտար լեզուների ուսուցման պետական չափորոշիչն ընդգրկի.

Ա) Օտար լեզուների ուսուցման նպատակը.

Բ) Հիմնական կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը.

Գ) Տարրական, հիմնական և ավագ դպրոցների շրջանավարտների պատրաստականությանը ներկայացվող մակարդակի պահանջները.

ՆՊԱՏԱԿԸ

Օտար լեզուների ուսուցումը նպատակաուղղված է.

Ա) Այլալեզու հաղորդակցության խոսքային, լեզվական, հանրամշակութային, ուսումնաճանաչողական գիտակության (կոմպետենցիա) զարգացմանը.

Բ) Աշակերտների զարգացմանն ու դաստիարակությանն օտար լեզուների միջոցով:

ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՈՎԱՆԿԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԸ

Սա վերաբերում է կրթության համընդհանուր բովանդակությանը, որը յուրաքանչյուր կրթական հաստատություն պարտավոր է տրամադրել սովորողներին՝ ապահովելու նրանց ընդհանուր կրթություն ստանալու սահմանադրական իրավունքը: Ինչպես մյուս առարկաների, այնպես էլ օտար լեզուների պարտադիր նվազագույնը ներկայացվում է ըստ առարկայական թեմաների՝ պարտադրորեն ընդգրկելով տարրական, հիմնական և ավագ դպրոցների կրթական ծրագրերը: Պարտադիր նվազագույնը ուսումնական նյութը բաշխում է ըստ ընդհանուր կրթության աստիճանների, ապահովում է դրա ընկալունակությունը՝ հնարավորություն տալով աշակերտներին հաջողությամբ շարունակելու կրթությունը հաջորդ աստիճաններում (մակարդակներում):

Նվազագույն բովանդակությունը հիմնական դպրոցում կարող է ներառել հետևյալ թեմաները՝ ա) հանրամշակութային ոլորտ՝ քաղաքի և գյուղի, արդի հասարակության խնդիրները, բ) գիտատեխնիկական ոլորտ՝ գիտության և տեխնիկայի առաջընթացը, հեռանկարը և հետևանքը, գ) պատանեկան և երիտասարդական ոլորտ՝ պատանիների և երիտասարդների դերն արդի հասարակության մեջ, հետաքրքրությունն ու խանդավառությունը, դ) պատմամշակութային և աշխարագրական ոլորտ՝ սեփական երկրի և ուսուցվող լեզվի երկրի աշխարհագրական միջավայրը, պատմամշակութային առանձնահատկությունները, ե)

պատմական ոլորտ՝ անցյալի և ներկայի նշանակալի իրադարձությունները:

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Սա ընդհանուր կրթության պետական չափորոշչի բաղադրիչի՝ շրջանավարտների յուրացրած պարտադիր նվազագույնի՝ չափորոշչով հաստատված արդյունքն է լինելու:

Պահանջները հանգում են հետևյալին. հիմնական դպրոցի ուսուցման ավարտին նախատեսվում է հասնել համաեվրոպական նախաշեմային մակարդակի (A2), ավագ դպրոցի հենքային մակարդակում՝ համաեվրոպական շեմային մակարդակի (B1), իսկ մասնագիտական մակարդակում՝ մոտենալ առաջադիմական շեմային մակարդակին (B2):

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՀԱՅՆԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ

Օտար լեզվի պետական չափորոշչի հայեցակարգային հիմքն են կազմում հետևյալ դրույթները.

1. Համաձայն կրթության անձնայնորեն կողմնորոշված հարացույցի՝ օտար լեզուների բոլոր աստիճանների ուսուցման չափորոշչի պետական բաղադրիչը նպատակաուղղված է օտար լեզուների ուսուցման **անձնայնորեն կողմնորոշված, գործունեության, հաղորդակցական-ճանաչողական և հանրամշակութային** մոտեցումների համալիր իրացում: Լեզվական կրթության նպատակը, բովանդակությունը և նախատեսվող արդյունքը ներկայացված են միասնական համակարգով, դրանց միջև հստակորեն արտահայտված գործունեութենական տերմիններով: Տրված բովանդակությունը միտված է դպրոցականի անձի կրթությանը, դաստիարակությանը և զարգացմանն **ուսումնասիրվող լեզվի միջոցով**:

Կրթության բովանդակության **անձնային իմաստը, նրա գործնական ուղղվածությունն** արտահայտվում է՝ 1) ուսուցման յուրաքանչյուր աստիճանին աշակերտների **տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ, հետաքրքրասիրությամբ, կարողություններով ու պահանջներով**, որոնք դրսևորվում են խոսքի առարկայական այն բովանդակության ընտրությամբ, որը հարաբերակցում է հաղորդակցության իրական խնդիրներին և իրական ոլորտներին, 2) **աշակերտի դրվածքով՝** ընտրության իրադրության մեջ ավագ դպրոցում տարամակարդակ ուսումնառության ընթացքում, և նրա **նպատակադրության ներառմամբ**, այդ թվում՝ մասնագիտության ուսուցողականության մակարդակի ընտրության ընթացքում:

2. Օտար լեզուների ուսուցման **գործունեության կանոնակարգումն** արտացոլված է չափորոշիչի՝ ուսուցման նպատակի և կառուցվածքի վրա: Շեշտադրվում է աշակերտի **այլլալեզու հաղորդակցության գիտակության զարգացումը՝** իր բոլոր բաղադրիչներով (լեզվական, խոսքային, հանրամշակութային, ուսումնաճանաչողական գիտակության), ինչպես նաև **ձևակերպումը՝** ըստ դպրոցի շրջանավարտների պատրաստականության մակարդակի՝ համապատասխան աստիճաններով:

Ուսուցման բովանդակությունը միտված է օտար լեզուներ սովորելիս աշակերտների **հիմնավորված զարգացմանը** և այլլալեզու **խոսքային գործունեության (ճանաչողության) բոլոր տեսակների կարողությունների ձևավորմանը**:

3. Օտար լեզվի ուսուցման **հիմնական նշանակությունը հաղորդակցական գիտակության ձևավորումն է**, այսինքն՝ կարողության ու պատրաստականության ապահովումը՝ օտար լեզվակիրների հետ իրականացնելու միջանձնային և միջմշակութային (այլլալեզու) հաղորդակցություն: **Մշակութային երկխոսությունը՝** որպես օտար լեզուների ուսուցման հանրամշակութային ուղղության արդյունք, միտված է օտար լեզվի ուսուցման բովանդակության մշակութաբանական հայեցակետի ուժգնացմանը՝ հաղորդակից դարձնելով դպրոցականների

ուսուցվող լեզվի երկրի մշակույթին, օգնելու նրանց սեփական երկրի մշակույթի գիտակցմանը օտար լեզվի միջոցով: Օտար լեզվի դասերին մշակույթների երկխոսության իրադրությունների կադապարումը հնարավորություն է տալիս սովորողին՝ համեմատելու տարբեր մշակութակիր ժողովուրդների կենսակերպն ու ոճերը, այդ լեզվական հանրույթների սովորույթներն ու մշակույթի կանոնները: Դպրոցում մշակույթների երկխոսության սկզբունքի իրացումը նպաստում է սովորողների մեջ արթնացնելու՝ ա) **մշակութային անկանխակալություն, հանդուրժողականություն, հանրամշակութային դիտողականություն, բ) պատրաստակամություն՝ շփվելու և գործակցելու այլամշակութային ձևաց հետ, գ) խոսքային ու հանրամշակութային տակտ և հարգանք:**

Հիմնական և ավագ դպրոցներում աշակերտների մեջ հանրամշակութային գիտակության ձևավորումն ու կատարելագործումն ուղղված են ուսուցվող լեզվի երկրի մարդկանց նկատմամբ՝ ա) **ընկալունակության շնորհի ձևավորմանը և զարգացմանը՝** ելք փնտրելու շփվելու ընթացքում հաղորդակցության խզումից, բ) այլամշակույթ / այլալեզու միջավայրում **հարազատ մշակույթը ներկայացնելու միջոցների տիրապետմանը:**

4. Կրթական չափորոշի պետական բաղադրիչը կառուցված է օտար լեզվի՝ որպես ուսումնական առարկայի առանձնահատկությունների հաշվառմամբ, որոնցից են **միջառարկայնությունը, բազմամակարդակայնությունը, բազմագործառականությունը:**

ՄԻԶԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԻ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՄԻԶՈՑՈՎ

Հայերենի՝ մայրենի և ՀՀ պետական լեզվի հետ կազմելով «Բանափիրություն» համակրթական ոլորտը՝ օտար լեզուն հնարավորություն է տալիս ուժգնացնելու դպրոցականների համալեզվական պատրաստականությունը: Ավելին՝ լեզվական կրթության մեջ առաջին անգամ հա-

ասնելի է միջառարկայական հարաբերակցությունը ինչպես մայրենի, այնպես էլ օտար լեզուների մոտեցումներում:

Օտար և մայրենի լեզուների չափորոշիչներում միջառարկայական փոխհարաբերության առկայությունը հնարավորություն է տալիս ձևավորելու և զարգացնելու հաղորդակցական մշակույթ մայրենի և օտար լեզուներով: Մայրենի և օտար լեզուները նախապատրաստում են աշակերտներին լեզվաբանական նախագիտելիքների ձեռքբերմանը, ընդլայնում են նրանց լեզվատրամաբանական մտահորիզոնը, նպաստում են հաղորդակցության մշակույթի ձևավորմանը, գործակցում են առհասարակ սովորողների խոսքային մշակույթի զարգացմանը: Դրանով է ի հայտ գալիս բոլոր լեզվական ուսումնական առարկաների փոխազդեցությունը՝ նպաստելով դպրոցականների բանասիրական կրթության հիմքերի ձևավորմանը:

Օտար լեզվի կրթական չափորոշիչի պետական բաղադրիչը թույլ է տալիս բարեհաջող իրացնելու միջառարկայական կապերը նաև այլ ուսումնական առարկաների առումով, որին նպաստում է օտար լեզվի՝ որպես ուսումնական առարկայի յուրահատկությունը: Խոսքի առարկայական բովանդակությունը կարող է աղերսներ ունենալ գիտության կամայական ոլորտի հետ (հասարակական, բնագիտական, կիրառական), իսկ օտարալեզու խոսքը միջմշակութային հաղորդակցության ընթացքում, ըստ հարկի, կարող է դրսևորվել գործունեության բոլոր ոլորտներում:

Օտար լեզվի կապը հասարակական հոսքի այլ գիտակարգերի հետ (պատմություն, գրականություն ևն) հնարավորություն է տալիս ստեղծելու այլալեզու **լրացուցիչ** դասընթացներ (օրինակ՝ երկրագիտական և մշակութագիտական), արտասահմանյան երկրների պատմության և գրականության **կամընտիր** դասընթացներ՝ ըստ ավագ դպրոցի մասնագիտացվող հոսքի: Ուսուցման այս աստիճանում կամընտիր դասընթացների օգնությամբ հնարավոր է օտար լեզվի և ոչ հասարակագիտական հոսքի գիտակարգերի միջառարկայական փոխազդե-

ցություն՝ ելնելով տվյալ կրթական հաստատության մասնագիտական ուսուցումից:

Օտար լեզվի՝ այլ առարկաների հետ համատեղ ուսումնասիրությունը նպաստում է ավագ դպրոցում աշակերտների մեջ ձևավորելու և զարգացնելու **վերաառարկայական** գիտակություն, որը ներառում է կրթական, արժեքային կողմնորոշիչ, համամշակութային, ուսումնաճանաչողական, իրազեկային, հաղորդակցային, հանրային-աշխատանքային, ինչպես նաև անձնային ինքնակատարելագործման գիտակություններ:

Մեծ դեր ունեն օտար լեզուների դասվանդման հարցում **տեղեկատվական տեխնոլոգիաները**: Կրթության իրազեկայնության գործընթացը ենթադրում է նաև իրազեկային-հաղորդակցային տեխնոլոգիաների կիրառություն հիմնական և ավագ դպրոցներում՝ օտար լեզուներ ուսումնասիրելիս սովորողների հաղորդակցական-խոսքային, ճանաչողական զարգացման համար:

ԱՄՓՈՓՈՒՄ

Իբրև ամփոփում կետ առ կետ նշենք, թե ինչ ձեռնարկումներ ու քայլեր են անհրաժեշտ օտար լեզուների միջոցով երկրի կրթության զարգացումը խթանելու համար: Դրանք են.

- 1) Աշակերտների ձերբազատում գաղափարական պարտադրանքից (դասավանդման ընթացքում և դասագրքերում նեղ կուսակցական տեքստերի բացառում):
- 2) Օտար լեզուների ուսուցման միջոցով աշակերտի ազատ մտածողության ապահովում և արժանավոր քաղաքացու դաստիարակություն:
- 3) Զինում բուհում պատրաստվող ուսուցչին արտերկրում պարբերաբար թարմացվող ուսուցման մեթոդների բազմազանությամբ, ուսուցիչների գործուղում արտերկիր՝ համապատասխան լեզ-

վական միջավայրով, և փոխանակում՝ արտերկրից հրավիրյալ օտարալեզու մասնագետների հետ:

- 4) Տարբեր օտար լեզուների ծրագրերի և դասագրքերի կազմության սկզբունքների նույնականություն, դրանց համաչափության ապահովում:
- 5) Օտար լեզուների ուսուցում՝ այդ լեզուներով **հաղորդակցություն** ապահովելու միջոցների ու եղանակների շեշտադրմամբ:
- 6) Նախորդ կետերի հիման վրա տևական ջանքերով **միջմշակութային հաղորդակցության** հիմքերի ապահովում՝ աշակերտին հետաքրքրաշարժ նյութերով արտաքին աշխարհի համամարդկային արժեք ներկայացնող ձեռքբերումների իրազեկմամբ:
- 7) **Միջառարկայական աղերսների** հնարների որոնում և հաստատում:
- 8) Դասագրքերի ուսուցողական նյութերի նպատակային հագեցում՝ բազմազանության և բազմաբովանդակության սկզբունքներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աստվածատրյան Մ. Գ. և այլք**, (2009), Հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներ և ծրագրեր (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն), ՀՀ ԿԳՆ/ԾԻԳ:
2. Լեզուների իմացության/ իրազեկության համանվիրոպական համակարգ, Նորք գրատուն, (2005), 290 էջ:
3. **Berer, Marge and Frank, Christine and Rinvoluceri, Mario.** (2002), Challenge to think. Oxford University Press.
4. **Brown H.D.** (2001), Teaching by principles: An attractive approach to language pedagogy. New York: Longman.
5. Common European Framework of References for Languages: Learning, Teaching, Assessment. Cambridge University Press/ CoE, (2001), 260 p.
6. **Jonassen D.H.** (1999), Constructing learning environments on the web: Engaging students in meaningful learning. EdTech 99: Educational

Technology Conference and Exhibition 1999: Thinking Schools, Learning Nation.

7. **Nunan David.** (2004), Communicative Language Teaching.
8. **Rodriguez R.J. & White, R.N.** (2003), From role play to the real world. Rowley, MA: Newbury House Publishers, Inc. Horner & McGinley, 2000.
9. **Scherling Th., Schuckall H.-F.** (1992), Mit Bildern Deutsch lernen. Handbuch fuer den Fremdsprachenunterricht.- Berlin, Muenchen, Wien, Zuerich, New York: Langenscheidt, 192.
10. **S. Scott W.A., & Ytreberg, L.H.** (2000), Teaching English to children. New York: Longman.
11. **Shaw Corsini,** (1998), Blake & Mouton, 1980; Horner & McGinley.
12. **Бабинская П. К., Леонтьева Т. П., Андреасян И. М., Будько А. Ф., Чепик И. В.** (2009), Практический курс методики преподавания иностранных языков. Издательство: ТетраСистемс.
13. **Бим И.Л., Биболетова М.З.** (2001), Возможные формы и содержание курсов обучения иностранным языкам в начальной школе. // Иностранные языки в школе. № 2.
14. **Витт Н.В.** (1999), Эмоциональное воздействие речи учителя иностранного языка. // Иностранные языки в школе. №6.
15. **Кривобокова И.Я., Лотарева Т.В.** (1989), Некоторые приемы обучения английскому языку на начальном этапе // Иностранные языки в школе. № 1.
16. **Корнаева З.В.** (1989), Об отборе коммуникативного минимума для начального этапа обучения в средней школе. // Иностранные языки в школе. № 1.
17. **Негневицкая Е.И., Никитенко З.Н., Артамонова И.А.** (1997), Книга для учителя. М., Просвещение, 357 с.
18. **Соловова Е. Н.** (2004), Методика обучения иностранным языкам, учебник для вузов.

ՀԱՄԱՅԱՆՑԻ ՀՂՈՒՄՆԵՐ

1. Научная библиотека диссертаций и авторефератов disserCat
2. <http://www.dissercat.com/content/obuchenie-analizu-uchebnika-inostrannogo-yazyka-v-protsesse-metodicheskoi-podgotovki-budushc#ixzz4iltibCz0>
3. Учебное пособие для студентов пед. институтов.-М.:Просвещение, 1986.- 223 с, Научная библиотека диссертаций и авторефератов disserCat
4. <http://www.dissercat.com/content/obuchenie-analizu-uchebnika-inostrannogo-yazyka-v-protsesse-metodicheskoi-podgotovki-budushc#ixzz4iluh0cE9>